ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 մարտի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

21
(3230)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԵՐԿԱՅԱՑԵԼ Է ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը օրերս ներկայացել է Հակակոռուպցիոն դատարան եւ հարցաքննվել «Քովիդ 19-ի գործով» քննվող քրեական վարույթի շրջանակում: «Ժողովուրդ»-ի աղբյուրների փոխանցմամբ՝ նախարարը դատարանից երկու անգամ ծանուցում է ստացել, սակայն զբաղվածության պատճառով չի ներկայացել: Ի վերջո, օրերս Ավանեսյանը ներկայացել է դատարան եւ ցուցմունք տվել: Թե ինչ բովանդակություն են ունեցել Ավանեսյանի ցուցմունքները, եւ ինչ զարգացումներ կարձանագրվեն գործով, առայժմ պաշտոնապես չի հաղորդվում: Միայն հայտնենք, որ գործը քննվում է դատավոր Մերի Մոսինյանի նախագահությամբ: Խոսքը վերաբերում է 2020թ. համավարակի ընթացքում իրականացված գործընթացներին եւ չարաշահումներին: Այդ ժամանակ Անահիտ Ավանեսյանը զբաղեցնում էր առողջապահության փոխնախարարի պաշտոնը եւ այն ժամանակվա նախարար Արսեն Թորոսյանի ենթական էր: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առաջիկայում նույն գործով նախատեսվում է նաեւ Արսեն Թորոսյանի հարցաքննությունը: Վերջինս համավարակի տարիներին ղեկավարում էր առողջապահության նախարարությունը, եւ հանրային դաշտում նրա հասցեին հնչել են սուր ու աղմկահարույց մեղադրանքներ՝ կապված համավարակի կառավարման եւ մահացության ցուցանիշների հետ: Անգամ նրան «մահվան նախարար» պիտակն են տվել:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Արայիկ Եսայանի հայտարարագիրը թվերի առումով ուշագրավ պատկեր է բացում. համեմատաբար միջին պետական աշխատավարձի դիմաց՝ խոշոր կանխիկ միջոցներ, բազմաբնակարան գույք եւ տասնյակ հազարավոր դոլարների ֆինանսական հոսքեր: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Եսայանի կենսագրությունն ու հայտարարագիրը: Նա փոխնախարար է նշանակվել 2025 թվականի հոկտեմբերին: Մինչ այդ զբաղեցրել է բարձր պաշտոններ ՀՀ ֆինանսների նախարարությունում՝ գլխավոր քարտուղարից մինչեւ վարչության պետ: Մոտ երեք տասնամյակ՝ ֆինանսաբյուջետային համակարգում: Այսինքն՝ ողջ կյանքում եղել է պետական համակարգի ներկայացուցիչ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Իշխող խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի շուրջ աղմկոտ պատմությունը մտել է քրեական փուլ: «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Քննչական կոմիտեն պաշտոնապես հաստատել է՝ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտը չկատարելը): Այս արարքը նախատեսում է պատիժ՝ տուգանք՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տեւողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: Սա մեղմ մասն է: Բայց քանի որ Արթուր Հովհաննիսյանը պաշտոնատար անձ է եւ, Էդգար Ղազարյանի պնդմամբ, դատավճռի չկատարումը նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք է, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տեւողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Մարտի 2-ին՝ ժամը 01:35-ի սահմաններում, ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի պահպանության ապահովման բաժնի ծառայողները լսել են անօդաչու թռչող սարքի (դրոն) ձայն: Տարածքի զննության արդյունքում հայտնաբերվել է կպչուն ժապավենով փաթեթավորված 1 փաթեթ: Փաթեթում առկա են եղել 1 wi-fi սարք, USB 3 լար եւ 2 լիցքավորման կոճ: Դեպքի առթիվ ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

ՊԵ՞ՏՔ Է ԼՌԵՆ

«ՄԵՐ ՎԱՐՔԸ ԳԾՎԱԾ Է ՕՐԵՆՔՈՎ»

ArmLur.am-ը հյուրընկալել է փաստաբան Մարինե Ֆարմանյանին: Բարձրագույն դատական խորհուրդը փաստաբաններին հորդորում էր զուսպ լինել իրենց արտահայտություններում, այլապես հետեւանքները վատ կարող են լինել փաստաբանների համար: Ի պատասխան՝ փաստաբանական համայնքը հանդես եկավ հայտարարությամբ, եւ տիկին Ֆարմանյանի հետ կխոսենք ընդհանուր իրավիճակի մասին:

-Տիկին Ֆարմանյան, անդրադառնանք ԲԴԽ հայտարարությանը. «Հորդորում ենք զերծ մնալ դատավորների մասին արատավորող տեղեկություններ եւ վիրավորանք պարունակող հրապարակումներից»՝ սա ի՞նչ է ենթադրում:Փաստաբանները պե՞տք է լռեն:

-Դժվար էր կանխատեսել, որ պրոֆեսիոնալ իրավաբանները կարող են հավաքվել ու այսպիսի արտահայտություն անել, ես գտնում եմ, որ սա իրավաբանության հետ որեւէ առնչություն չունի, քանի որ ԲԴԽ-ում բարձր մակարդակի իրավաբաններ են աշխատում եւ գիտեն, որ սա անթույլատրելի գործողություն է՝նկատի ունեմ տվյալ հայտարարությունը, եւ փորձ է փաստաբանական համայնքը ճնշելու եւ փաստաբանների ձայնը լռեցնելու: Նախ արձանագրենք, որ որեւէ վիրավորական խոսք կամ բնորոշում կոնկրետ Արա Զոհրաբյանի կողմից չի եղել, որին թիրախավորել էր ԲԴԽ-ն իր հայտարարությամբ, շատ զարմանալի է նաեւ որ արդեն անձերին են անդրադառնում: Օրինակ, եթե հայտնաբերվի մի այնպիսի դեպք, երբ դատավորին վիրավորում է փաստաբանը, այդ փաստաբանը դրա համար կարգապահական պատասխանատվության կենթարկվի, եւ փաստաբանների պալատում նման կարգապահական որոշումներ ունենք: Հետեւաբար այս շրջանակի մեջ արհեստականորեն տեղավորել վիրավորանք եզրույթը, իհարկե որեւէ կերպ չի ստացվի: Որովհետեւ ե՛ւ կողմնակալ, ե՛ւ անկողմնակալ դիտորդի համար պարզ է, որ որեւէ վիրավորական արտահայտություն կամ գործողություն չի կատարվել որեւէ դատավորի նկատմամբ:

-Տիկին Ֆարմանյան, այս հայտարարությունը կոնկրետ Ձեր գործելաոճում որեւէ բան փոխե՞ց:

-Քանի որ ես հասկանում եմ, որ այդ հայտարարությունը հակահիրավական է, եւ իմ ամբողջ մասնագիտական ճանապարհը պայքարի միջով եմ անցել եւ շատ լուրջ, չնայած հիմա այնպիսի խախտումների եմ ականատես լինում, որ նախկինում դրա մասին նույնիսկ շատ դժվար պատկերացումներ կարող էր լինել, որ այդպիսի բան կարող էր տեղի ունենալ, անձամբ ինձ ոչինչ չի վախեցնում: ԲԴԽ-ն հակահիրավական ապօրինի հայտարարություններով եւ գործողություններով ինձ եւ իմ բազմաթիվ գործընկերներին չի կարող լռեցնել, որովհետեւ փաստաբանությունը հենց կոչված է համարձակ եւ պրոֆեսիոնալ պայքար իրականացնել, հետեւաբար մեր բոլոր գործընկերներն էլ հասկանում են, որ դա իշխանությանը հաճելի ժեստ անելու փորձ էր, իբրեւ տեսեք՝ մենք ձեր կամքը կատարեցինք: Ինչու եմ այդպես ասում, քանի որ երկրի վարչապետի՝ 24-ժամյա ռեժիմով եկեղեցու հոգեւորականների նկատմամբ ձերբակալման գործընթացի ուղիղ ուղեկցումով հանրային հարթակում վիրավորանքներ ու սպառնալիքներ են գրում, արդեն հասկանում ես, որ դատական իշխանությունը ինքն է սահմանափակվել: Բայց այսօր մենք ունենք կայացած փաստաբանություն, ի ուրախություն մեզ՝ունենք կայացած լրագրություն, ովքեր մեր պայքարի հետ մեզ հետ են հանուն պետության եւ հանուն արդարության:

Այս որակի արտահայտությունները ինձ անձնապես ոչ թե վախեցնում, այլ տխրեցնում են: Որ իմ երկրի բարձրագույն խորհրդի դատարանին ես՝ որպես փաստաբան, կարող եմ ամբողջությամբ ապավինել, օրինակ, որ դատարաններում մի բան այնպես չեղավ, ես կկարողանամ արդարությունը գտնել, որ կարող եմ իմ բոլոր իրավական պահանջները ներկայացնել ու պատասխանները գտնել ԲԴԽ-ում, մեկ էլ տեսնում ենք, որ այդ նույն խորհուրդը ասում է, որ հակահիրավաչափ վարք եք դրսեւորում: Եւ ուզում եմ ավելացնել, որ իրենք չէ, որ պետք է մեր վարքը գծեն, քանի որ մեր վարքը գծված է օրենքով:

-Տիկին Ֆարմանյան, օրինակ Սամվել Կարապետյանի դեպքում գործարարը հայտարարություն է անում, որ ինքը իր ձեւով կփորձի եկեղեցուն սատարել եւ, ըստ էության, կալանքի տակ է, սպառնո՞ւմ է այսպիսի վտանգ փաստաբաններին, այսինքն՝ հորդորը տեղ չհասավ, քրեական վարույթով կլռեցնեն ազատ խոսքը:

-Սամվել Կարապետյանի վերաբերյալ ասեմ, որ իշխանական շատ ներկայացուցիչներ նույնիսկ պատկերացում չունեն նրա գործունեության մասին, թե կոնկրետ նա ինչ է արել Հայաստանի եւ Արցախի համար: Եթե նույնիսկ շատ երկար փորձեն մտածել, չեն կարող հասկանալ: Հաստատագրում ենք, որ մեր ազգային բարերարի նկատմամբ ապօրինի քրեական հետապնդում է իրականացվում, եւ նա մի խոսքի համար գտնվում է անազատության մեջ առ այսօր: Եթե փաստաբանների ազատ խոսքի համար քրեական պատասխանատվության կանգնեցնեն, ուրեմն Հայաստանը երբեւիցե այդ իրավիճակում չի կարող իրավական համարվել: Այսինքն՝ կջարդվեն եվրոպական բոլոր նախադեպերը՝ ազատ խոսքին, մարդու իրավուքների պաշտպանությանը վերաբերող, եւ դա ուղիղ կսպառնա պետության իրավական անվտանգությանը: Քանի որ իրավական համակարգի մեջ ուժեղ եւ ազատ փաստաբանությունը շատ կարեւոր համակարգ է, եւ եթե սկսվեց ռեպրեսիվ քրեական գործընթացները, ուրեմն կարող ենք հաշվել, որ սահմանադրությունից մենք ջնջում ենք իրավական եզրույթը, որտեղ որ սահմանվում է, որ Հայաստանը իրավական պետություն է:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՉԻ ՄԱՄՆԱԿՑԻ

«Հայրենիք» կուսակցության գործադիր մարմինը որոշեց չմասնակցել 2026 թվականին սպասվող խորհրդարանական ընտրություններին: Կուսակցությունը հայտարարել է. ««Հայրենիք» կուսակցության գործադիր մարմինը, փետրվարի 26-ի նիստում, բազմակողմանիորեն քննարկեց Հայաստանի ներքաղաքական իրավիճակը, առկա ներքին եւ արտաքին մարտահրավերները, ինչպես նաեւ նախընտրական փուլին բնորոշ զարգացումները:

Արձանագրելով.

1) Իշխանափոխությունը գերակա առաջնահերթություն է, որը բխում է պետության ռազմավարական նպատակներից, իսկ դրա հիմնավորումներն ու պատճառները տարիներ շարունակ ներկայացվել են:

2) Ներքաղաքական սուր լարվածությունը շարունակվում է պահպանվել:

3) Քաղաքական դաշտը շարունակում է բեւեռացված մնալ՝ առանց իրական համախմբող պետական գաղափարախոսության եւ արժեքային հստակ առանցքի:

4) Պետական ինստիտուտների նկատմամբ իրավական եւ բարոյական պատասխանատվության մեխանիզմները գործնականում չեն ապահովում արդյունավետ հակակշիռներ եւ վերահսկողություն:

5) Քաղաքական գործընթացները շարունակում են կառուցվել ոչ ինստիտուցիոնալ տրամաբանությամբ, ինչն արգելակում է կայուն պետական զարգացման հնարավորությունը:

6) «Հայրենիք» կուսակցության գաղափարական հիմքերը, ծրագրային առաջնահերթությունները եւ Հայաստանի ապագայի վերաբերյալ ռազմավարական պատկերացումները տարբերվում են քաղաքական դաշտում գործող մյուս ուժերի մոտեցումներից, ինչի արդյունքում դաշինքի ձեւավորումը դառնում է ոչ իրատեսական:

7) Ընդդիմադիր դաշտից ընտրությունների մասնակից ուժերի քանակի մեծացումը կարող է առաջացնել ընտրողների քվեների մասնատում եւ քաղաքական ռեսուրսների բաշխման անարդյունավետություն, ինչը վերոնշյալ պայմաններում կարող է բացասաբար անդրադառնալ սպասվող ընտրական գործընթացների արդյունքների վրա:

Ամփոփելով արձանագրվածը, մի կողմից նպատակ ունենալով հնարավորին նպաստել ընդդիմադիր ձայների համախմբմանը, եւ մյուս կողմից չգնալ գաղափարական հիմք չունեցող, արհեստական դաշինքների եւ/կամ միավորումների ձեւավորման ճանապարհով՝ Կուսակցության գործադիր մարմինը որոշեց.

1. չմասնակցել 2026 թվականին սպասվող խորհրդարանական ընտրություններին,

2. հորդորել կուսակցության անդամներին, համակիրներին եւ աջակիցներին առաջիկա խորհրդարանական ընտրություններում իրենց ձայնը տալ իրական ընդդիմադիր ուժերից ցանկացածին՝ ըստ սեփական նախընտրության,

3. հետեւողականորեն շարունակել «Հայրենիք» կուսակցության զարգացման գործընթացը՝կուսակցաշինության բոլոր ուղղություններով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն որոշման հետ կապված հարցերին անհրաժեշտության դեպքում կանդրադառնանք ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո՝ելնելով այն պատասխանատվությունից, որ մինչեւ ընտրությունները որեւէ կերպ չստեղծվի պայման կամ հնարավորություն, որը կարող է վնասել իրական ընդդիմադիր ուժերին»:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՔՊ–ԱԿԱՆ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԸ

Այսօր առավոտյան մեկնարկում է ԱԺ հերթական նստաշրջանը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ նիստերի օրակարգում ընդգրկված է ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրությունը: Նշենք, որ այդ պաշտոնում ՔՊ-ն առաջադրել է խմբակցության պատգամավոր Վանիկ Օհանյանի թեկնածությունը:

Իսկ ո՞վ է Վանիկ Օհանյանը:

Վանիկ Օհանյանը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր է: Նա 44 տարեկան է, ծնվել է Վանաձորում եւ ավարտել է Երեւանի պետական բժշկական համալսարանի ստոմատոլոգիական ֆակուլտետը: Նախքան քաղաքականություն գալը աշխատել է համայնքային եւ բժշկական կառույցներում՝ղեկավարել պոլիկլինիկաներ եւ նաեւ հիմնել սեփական ստոմատոլոգիական կլինիկան:

Նշենք, որ Օհանյանը ինչ հայտնվել է խորհրդարանում, նպատակ ունի դառնալ այդ հանձնաժողովի նախագահը: Լռակյաց, բոլորից «կտրված» ՔՊ-ական պատգամավորը դեռեւս օգոստոսին նպատակադրվել էր այդ հանձնաժողովը ղեկավարել, սակայն չստացվեց: Այդ ժամանակ ՔՊ-ն ընտրեց ՔՊ-ական Հռիփսիմե Հունանյանին:

Իսկ ինչո՞ւ վերջինս հրաժարական ներկայացրեց:

Նա հանրայն քննադատության արժանացավ Ազգային Ժողովում հնչեցրած այն հայտարարությունների համար, որոնք մի շարք քաղաքացիների կողմից դժգոհություն ու բարկություն առաջացրին: Նա ինքն է իր ֆեյսբուքյան էջում ներողություն խնդրել այդ «վճարներով հնարած» ձեւակերպումների համար:

ՔՊ վարչությունը Հունանյանին հորդորեց հրաժարական ներկայացնել: Հունանյանը որոշեց նաեւ հրաժարվել առաջիկա խորհրդարանական ընտրությունների համամասնական ցուցակում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից ընդգրկվելու հնարավորությունից՝ նույն մեղադրանքների ֆոնի վրա:

Ս. Գ.

ՊԱՀԱՆՋ

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը: Այս մասին տեղեկացնում է գլխավոր դատախազությունը. «Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ ՀՀ կրթության եւ գիտության նախկին նախարար Լեւոն Հովհաննեսի Մկրտչյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

26 անշարժ գույք.

7 տրանսպորտային միջոց.

5 իրավաբանական անձանցում մասնակցություն.

893 միլիոն 449 հազար դրամ՝ որպես ապօրինի դրամական միջոցների մնացորդ.

276 միլիոն 106 հազար դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՈՍԿԵՊԱՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԻ ԵԶՐԻՆ

Կուսակցական քարոզարշավի շրջանակներում մարտի 1-ին Տավուշի մարզ այցելած վարչապետ Նիկոլ Փաշինյանը, այլ պաշտոնյաներ այցելել են նաեւ Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար գյուղի 6-7-րդ դարերի Սուրբ Աստվածածին եկեղեցի: ԱԺ տնտեսական հանձնաժողովի նախագահի տեղակալ Բաբկեն Թունյանը այդ առթիվ Ֆեյսբուքում լուսանկար է հրապարակել, դրան կից գրել. «Ոսկեպարի եկեղեցին, որը, ըստ մեր ընդդիմության պնդումների, մնալու էր սահմանից այն կողմ»:

Իսկապես, Հայաստանի որոշ ընդդիմադիրներ մտահոգություններ ունեին, որ սահմանազատման անվան տակ Ադրբեջանին հանձնվելիք տարածքների հետ Ոսկեպարի Սուրբ Աստվածածին եկեղեցին կարող էր հայտնվել Ադրբեջանի տարածքում, որից հետո ադրբեջանական քարոզչամեքենան այն կներկայացներ որպես աղվանական կամ ադրբեջանական հոգեւոր կոթող: Ադրբեջանցիները միշտ էլ աչք են ունեցել Ոսկեպարի Սուրբ Աստվածածին եկեղեցու վրա: Նրանք հայկական ճարտարապետության այդ արժեքավոր կառույցը փորձում էին ներկայացնել որպես ադրբեջանական մզկիթ: 1970-ական թվականների կեսերին նրանք փորձում էին յուրացնել այդ եկեղեցին, սակայն շնորհիվ Ոսկեպար գյուղի բնակիչ, Զորավար Անդրանիկի զինվոր Դուրախան Մանուչարյանի եւ այլոց դիմադրության, եկեղեցին մնաց Հայաստանին: 1975-1977 թվականներին եկեղեցին նորոգվել է:

2024 թվականին սահմանազատման անվան տակ ապօրինի, միակողմանի կերպով Նոյեմբերյանի սահմանագոտում 30 տարվա ամրացված դիրքերը, տարածքներն Ադրբեջանին հանձնելու հետեւանքով Ոսկեպարի եկեղեցին հայտնվել է սահմանի եզրին, այդ պատճառով այժմ քաղաքացիական անձինք հազվադեպ են այցելում այդտեղ: Սահմանազատումից հետո եկեղեցին նորոգվել է, եկեղեցու խաչը նորոգման նպատակով որոշ ժամանակ հանվել էր, ինչը որոշակի անհանգստություն էր առաջացրել Ոսկեպարի բնակիչների, սահմանագոտում ապրողների մոտ: Համացանցում տեղադրված տեսանյութում երեւում է, որ մարտի 1-ին Նիկոլ Փաշինյանը եւ նրան ուղեկցողները դեպի Ոսկեպարի Սուրբ Աստվածածին եկեղեցի են քայլում բաց դաշտով, իսկ վարչապետի անվտանգության աշխատակիցը Նիկոլ Փաշինյանին հորդորում է ճանապարհով քայլել:

Նշեմ, որ ներկայումս դեպի Սուրբ Աստվածածին եկեղեցի տանող նորմալ, բարեկարգ ճանապարհ չկա, ինչը եւս խոչընդոտ է, որ Ոսկեպար գյուղի, Նոյեմբերյան համայնքի սահմանագոտու բնակիչները, հավատացյալներն այցելեն հնամենի Սուրբ Աստվածածին եկեղեցի: ՔՊ-ական պատգամավոր, ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Բաբկեն Թունյանը Ֆեյսբուքում նման գրառում անելուց առաջ պետք է հիշեր, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը Ադրբեջանին է հանձնել Արցախը, 385 եկեղեցի եւ 60 վանք:

ՆԱԽԿԻՆ «ԱՌԱՋԻՆ ՏԻԿԻՆԸ»

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔՈՎ ՀԵՌԱՑԱՎ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԸ

Աննա Հակոբյանը հաստատեց, որ բաժանվել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանից եւ հայտնեց, որ հեռանում է կառավարական առանձնատնից: Քաղաքական դաշտում լայն արձագանք ստացած այս հայտարարության ֆոնին «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է նրա՝ 2024 թվականի գույքի, եկամուտների եւ ծախսերի տարեկան հայտարարագրի առանցքային տվյալները՝ հասկանալու, թե ինչ ֆինանսական եւ գույքային դրսկերով է նա հեռանում առաջին տիկնոջ կարգավիճակից:

Անշարժ գույք

Հայտարարագրի համաձայն՝ 2024 թվականի դրությամբ Աննա Հակոբյանն ունեցել է երկու բնակարան՝ երկուսն էլ Երեւանում:

• Բնակարան՝ Շենգավիթ վարչական շրջան (ձեռք բերված 2005թ., գնում, միանձնյա սեփականություն)

• Բնակարան՝ Երեւան (ձեռք բերված 2006թ., ժառանգություն, բաժնային սեփականություն՝ 4/9 բաժնեմաս)

Միաժամանակ, 2024 թվականի ընթացքում նա օտարել է Շենգավիթում գտնվող բնակարանը՝ այն վաճառելով 45,500,000 դրամով: Տարեվերջին, ըստ հայտարարագրի, նրա սեփականության տակ մնացել է միայն ժառանգությամբ ստացված բնակարանի 4/9 բաժնեմասը:

Տրանսպորտային միջոցներ

Հայտարարագրված են երեք ավտոմեքենա՝

• NISSAN (2008թ., ձեռք բերված՝ 2010թ.)

• RENAULT (2006թ., ձեռք բերված՝ 2009թ.)

• VAZ (2004թ., ձեռք բերված՝ 2009թ.)

Բոլոր մեքենաները ձեռք են բերվել մինչեւ իշխանափոխությունը, ինչը արձանագրված է նաեւ նախորդ տարիների հայտարարագրերում:

Ներդրումներ եւ բաժնեմաս

Աննա Հակոբյանը հայտարարագրել է բաժնեմաս՝ 29/05/2009թ. ձեռք բերված, 25,000 դրամ արժեքով: Այլ խոշոր ներդրումներ կամ արժեթղթեր հայտարարագրում նշված չեն:

Փոխառություններ

Հայտարարագրի համաձայն՝ տարեվերջին առկա է 49,350,000 դրամ փոխառություն, տրամադրված՝

• «Իջեւանատուն» ՓԲԸ

• «Ար ընդ Ար» ՍՊԸ

Փոխառությունների տրամադրման պայմանները հայտարարագրում մանրամասն չեն ներկայացվում, սակայն գումարի չափը խոսում է էական ֆինանսական շրջանառության մասին:

Բանկային միջոցներ եւ կանխիկ դրամ

2024 թվականի ավարտին հայտարարագրված են հետեւյալ դրամական միջոցները՝

• Բանկային ավանդներ՝ 40,000 ԱՄՆ դոլար եւ 10,000,000 դրամ

• Բանկային հաշիվների մնացորդ՝ 3,622,308 դրամ

• Կանխիկ դրամ՝ 8,500 ԱՄՆ դոլար եւ 650,000 դրամ

Այսպիսով, միայն բանկային եւ կանխիկ միջոցների ընդհանուր ծավալը կազմում է տասնյակ միլիոնավոր դրամների համարժեք գումար:

Եկամուտներ

2024 թվականի ընթացքում հայտարարագրված եկամուտները ներառում են՝

• Ստացված վարկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ - 44,415,000 դրամ

• Աշխատանքի վարձատրություն՝ «Իմ Քայլը» բարեգործական հիմնադրամ - 13,259,798 դրամ

• Աշխատանքի վարձատրություն՝ «Դարեսկիզբ» - 2,500,000 դրամ

• Այլ եկամուտ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն - 201,573 դրամ

• Անշարժ գույքի վաճառքից ստացված եկամուտ՝ 45,500,000 դրամ

Հայտարարագրում նշված ընդհանուր եկամուտը կազմել է 105,876,371 դրամ:

Տարեվերջին ստացված վարկերի մայր գումարի մնացորդը կազմել է 44,415,000 դրամ՝ նշված որպես կառուցվող շենքում բնակարանի ձեռքբերման նպատակով ներգրավված միջոց:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՆՉ ԵՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ մի քանի տասնյակ արցախցիներ պատրաստվում են հավաքվել եւ բողոքի ակցիա իրականացնել Երեւանի Նաիրի Զարյան 17/Ա հասցեում գործող Արցախի Հանրապետության ներկայացուցչության շենքի դիմաց:

Նրանք այն նույն արցախցիներն են, որոնք ամիսներ առաջ կրկին նույն տեղում բողոքի ակցիա էին իրականացրել: Մեզ հայտնի է դարձել, որ նրանք այս պահին քննարկում են, թե ովքեր են գալու հավաքին եւ, ըստ այդմ էլ, պլանավորում են իրենց գործողությունները:

Մեզ տեղեկացրեցին նաեւ այն, որ հավաք նախաձեռնողները նախօրոք նամակ են ուղարկելու ներկայացուցչություն Արցախի ԱԺ նախագահ, նախագահի պաշտոնակատար Աշոտ Դանիելյանին, որպեսզի հավաքը լինի ներկայացուցչության ներսում՝ հարցուպատասխանի ձեւով:

Հավաքի նախաձեռնողները, մեր տեղեկությունների համաձայն, պահանջում են, որ այդ հանդիպմանը ներկա լինեն ԱԺ 22 պատգամավորները, որոնք էլ, ըստ իրենց, առանց հաշվի առնելու ժողովրդի կարծիքը, ընտրել են Արցախի 5-րդ նախագահ Սամվել Շահրամանյանին: Նրանք նաեւ ցանկանում են հարցուպատասխանին տեսնել Սամվել Շահրամանյանին, Արցախի բոլոր նախարարներին եւ հիմնադրամների տնօրեններին:

Մեզ նաեւ տեղեկացրեցին, որ հավաքի նպատակն է ստանալ հետեւյալ հարցերի պատասխանը. ինչո՞ւ Արցախը կորցրինք, որտե՞ղ եւ ի՞նչ նպատակներով են իրացվել հիմնադրամների գումարները, եւ ովքե՞ր են օգտվել նախարարությունների ներքո գործող պետական աջակցության ծրագրերից:

Հարկ ենք համարում հիշեցնել նաեւ այն, որ արցախցիները մեծավ մասաբ դեմ են այս մի քանի տասնյակ արցախցիներին, քանի որ նրանք պնդում են, որ հենց այս մի քանի տասնյակ արցախցիներն են ողջունել 2018 թվականի հեղափոխությունը եւ առ այս պահ աջակցում ու սատար են կանգնում Հայաստանի Հանրապետության գործող իշխանությանը:

Ն. Ա.

ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՐԵԼ Է

Ադրբեջանում Ճապոնիայի դեսպանատունը դադարեցրել է իր գործունեությունը: «Տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների պատճառով դեսպանատունը անորոշ ժամանակով դադարեցրել է իր գործունեությունը: Վիզայի դիմումների ընդունումը եւ լրացված վիզաների տրամադրումը նույնպես դադարեցվել են»,-ասվում է դեսպանատան հայտարարության մեջ:

Հիշեցնենք, որ ԱՄՆ-ն եւ Իսրայելը փետրվարի 28-ից ռազմական գործողություն են սկսել Իրանի դեմ: Հարվածների տակ են հայտնվել ԻԻՀ մայրաքաղաք Թեհրանը եւ երկրի խոշորագույն քաղաքները: Հարվածներից անմիջապես հետո Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ) հայտարարել է լայնածավալ պատասխան գործողության մասին: Հաղորդվում է, որ Իրանը հրթիռներ եւ անօդաչու թռչող սարքեր է արձակել Իսրայելի, ինչպես նաեւ Բահրեյնում, Հորդանանում, Քաթարում, Քուվեյթում, ԱՄԷ-ում ու Սաուդյան Արաբիայում գտնվող ԱՄՆ ռազմաբազաների ուղղությամբ:

Հարձակման արդյունքում սպանվել է նաեւ Իրանի գերագույն առաջնորդ Այաթոլլա Ալի Սեյեդ Խամենեին: Մարտի 2-ին Իսրայելի դեմ պատերազմի մեջ է մտել նաեւ «Հեզբոլլահ» շարժումը: Իսրայելը հայտարարել է շարժման դեմ հարձակողական գործողության մեկնարկի մասին:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ

ԴԱՆԱԿԸ, ՈՐՈՎ ՍՊԱՆԵՑԻՆ, ՉԳՏԱՆ

Երեկ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ՀՀ քննչական կոմիտեն ՍԴ դատավոր Արտակ Զեյնալյանի հորեղբոր որդուն սպանելու գործով նախաքննության ավարտ է հայտարարել ու գործը ուղարկել է դատարան: Աղմկահարույց սպանության գործը կքննի դատավոր Դավիթ Գրիգորյանը:

2025 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Հայկ Սուքիասյանից տեղեկանալով, որ Սարգիս Զեյնալյանը գտնվում է Աբովյան քաղաքի Հանրապետության փողոցի 20-րդ շենքի մոտ գտնվող կանգառի հետնամասում, Աշոտ Սոխրաբյանցը եւ Բենիամին Սոխրաբյանցն իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցանքը կատարելու նպատակով գնացել են այդտեղ: Հասնելով Աբովյան քաղաքի Հանրապետության փողոցի 20-րդ շենքի մոտ գտնվող կանգառի հետնամաս՝ Աշոտ Սոխրաբյանցը եւ Բենիամին Սոխրաբյանցը մոտեցել են այնտեղ կանգնած Սարգիս Զեյնալյանին եւ նրա հետ գտնվող Սլավիկ Արթուրի Թորոսյանին, որից հետո Սարգիս Զեյնալյանին խմբի կազմում ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, փոխլրացնելով միմյանց գործողությունները, նախապես կատարված դերաբաշխման համաձայն, վերջինների ուշադրությունն իր վրա գրավելու նպատակով, Բենիամին Սոխրաբյանցը մոտեցել է նրանց, ձեռքով երկար բարեւել եւ ներկայացել, որի ընթացքում, Աշոտ Սոխրաբյանցը, օգտվելով Սարգիս Զեյնալյանի եւ Սլավիկ Թորոսյանի կողմից իրեն ուշադրություն չդարձնելու հանգամանքից, գրպանից հանել է քրեական վարույթի շրջանակներում չհայտնաբերված դանակը եւ դրանով առնվազ ութ անգամ հարվածել Սարգիս Զեյնալյանի կենսական կարեւոր օրգանների՝ որովայնի եւ կրծքավանդակի հատվածին: Այդ ընթացքում Բենիամին Սոխրաբյանցը, ցանկանալով չեզոքացնել Սարգիս Զեյնալյանի դիմադրությունը եւ հեշտացնել դրա կատարումը, տեսնելով առաջին հարված հասցնելը՝ բռնել է վերջինի պարանոցից, քաշել հետ՝ այդպիսով չեզոքացնելով Սարգիս Զեյնալյանի դիմադրությունը եւ Աշոտ Սոխրաբյանցին հնարավորություն տվել անխոչընդոտ հարվածել Սարգիս Զեյնալյանի կրծքավանդակի հատվածին, գցել գետնին եւ շարունակելով վերջինի դիմադրությունը չեզոքացնելուն ուղղված գործողությունները՝ բարձրանալու ընթացքում ոտքով հարվածել նրան, բացի այդ, մի կողմ է քաշել Սլավիկ Թորոսյանին՝ դեպքին չմիջամտելու եւ իրենց գործողությունները չխոչընդոտելու համար:

Այսքանով ամեն ինչ չի ավարտվել: Ցանկանալով խուսափել Աշոտ Սոխրաբյանցի հարվածներից՝ Սարգիս Զեյնալյանը վազելով գնացել է Աբովյան քաղաքի Հանրապետության փողոցի 20-րդ շենքի մոտ գտնվող կանգառի դիմացի մաս, իսկ Աշոտ Սոխրաբյանցը վերջինին ապօրինաբար կյանքից զրկելու ձեւով իր հանցավոր դիտավորության մեջ ընդգրկված արարքն ավարտին հասցնելու նպատակով գնացել է նրա հետեւից ու եւս չորս անգամ դանակով հարվածել Սարգիս Զեյնալյանի կենսական կարեւոր օրգանների հատվածին, որի արդյունքում ստացած կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներից Սարգիս Զեյնալյանը մահացել է:

Բացի այդ, Բենիամին Կառլի Սոխրաբյանցը 2025 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Աբովյան քաղաքի Հանրապետության փողոցի 20-րդ շենքի մոտ գտնվող կանգառի հետնամասից հափշտակել է Սարգիս Զեյնալյանի մոտից գետնին ընկած փամփշտատուփը եւ դրանում գտնվող սահմանափակ խոցելիության հրազենի համար նախատեսված, թվով 5 հատ 9 մմ տրամաչափի ռազմամթերք հանդիսացող փամփուշտները:

ՔՆՆՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԱՎՏՈՎԹԱՐ

Մարտի 2-ին ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Արագածոտնի մարզում: Ժամը 06:50-ին «ՎԱԶ-2115» մակնիշի ավտոմեքենան Գյումրի-Երեւան Մ1 ավտոճանապարհի 99 կմ հատվածում դեպի Երեւան ընթանալիս Մաստարա բնակավայրի վարչական տարածքում բախվել է երկաթե արգելապատնեշներին ու գլխիվայր հայտնվել դաշտում:

Shamshyan.com-ն էլ հայտնում է, որ վթարի հետեւանքով 1 հոգի տեղում մահացել է, 3-ը տեղափոխվել են Թալինի բժշկական կենտրոն, որոնցից 2-ը՝ Երեւանի մասնագիտացված հիվանդանոցներ:

Դեպքի վայր են ժամանել ոստիկանության եւ փրկարար ծառայության համապատասխան ստորաբաժանումները, որոնք սահմանազատել են տարածքը եւ առաջին օգնություն ցուցաբերել: Վթարի մասին տեղեկությունը փոխանցվել է ՀՀ Քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչությանը, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ: Ավտոմեքենան տեղափոխվել է ոստիկանության Թալինի բաժնի հատուկ պահպանվող տարածք:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՐԳԵՎԱՏՐԱԾ ՁԵՆՔԸ

Փետրվարի 23-ին Վանաձոր քաղաքի Թումանյան փողոցի 11 հասցեում միջադեպ է եղել: Իրավապահները տեղեկություններ են ունեցել, որ միջադեպի մասնակիցներից մեկը զենք ունի:

Տարված բացատրական աշխատանքների արդյունքում Մ. Մովսիսյանը իր բնակության վայրում ներկայացրել է «ՍԿՍ» մոդելի 7.62 մմ տրամաչափի ТУ4682К գործարանային համարի քաղաքացիական հրացան՝ հայտարարելով, որ այն պատկանում է իրեն եւ հանդիսանում է պարգեւատրական զենք:

Կատարված ստուգումների արդյունքում պարզվել է, որ Մ. Մովսիսյանը 2020թ. օգոստոսի 17-ին հիշյալ զենքով պարգեւատրվել է ՀՀ վարչապետի կողմից, սակայն օրենքով սահմանված կարգով հաշվառելու համար ոստիկանություն չի ներկայացրել, եւ այն չի հաշվառվել ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության թույլտվության համակարգում:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս տարվա հունվարի 26-ին Առինջ գյուղի մի բնակիչ ահազանգել էր Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն, որ իր բացակայության ընթացքում կոտրել են տան պատուհանն ու գողացել 9 հազար դոլար:

Բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության հատկանիշներով նախաձեռնվեց քրեական վարույթ:

Մինչ Քրեական ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ծառայողները ձեռնարկում էին բացահայտմանն ուղղված միջոցառումներ, փետրվարի 6-ին ստացվեց նմանատիպ եւս երկու ահազանգ, երկուսն էլ Վերին Պտղնի գյուղից: Մի դեպքում խառնել ու թալանել էին տունը՝ թողնելով ոտնահետքեր, մյուս դեպքում՝ ոչինչ չգողանալով փախել էին:

Հետքերը հուշում էին, որ գողություններին մասնակցել է առնվազն երկու անձ: Կոտայքի քրեական ոստիկանների վարկածով երեք դեպքն էլ նույն անձանց գործն է:

Այս տրամաբանությամբ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում քրեական ոստիկանները ստացան տեղեկություն, որ բնակարանային գողություններն ու փորձը կատարել են մայրաքաղաքի բնակիչներ 31-ամյա եւ 27-ամյա տղամարդիկ: Ավելին, քրեական ոստիկաններին հաջողվեց նաեւ փաստով բռնել նրանց:

Փետրվարի 14-ին տղամարդիկ կենցաղային իրերի գողություն կատարեցին նաեւ մայրաքաղաքի Բագրեւանդի փողոցի մի տնից, եւ նույն փողոցի բնակիչ 30-ամյա տղամարդու վարած «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի մեքենայով տեղափոխում էին գողոնը, երբ Կոտայքի քրեական ոստիկանները, համագործակցելով Քրեական ոստիկանության գլխավոր վարչության գործընկերների հետ, ժամը 15:35-ին Արշակունյաց պողոտայում երեքին էլ ձերբակալեցին ու տեղափոխեցին Քրեական ոստիկանության մարզային վարչություն:

31 եւ 27 տարեկան տղամարդկանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը: Նրանք տեղափոխվել են քրեակատարողական հիմնարկ:

Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔ

Փետրվարի 27-ին Համայնքային ոստիկանության գլխավոր վարչությունում եւ Քրեական ոստիկանության Արարատի մարզային վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Արտաշատի 41-ամյա մի բնակիչ Տոյոտա մակնիշի մեքենայով գտնվում է Դվին գյուղում, իր մոտ ունի ապօրինի ինքնաձիգ եւ մի խումբ տղամարդկանց հետ նախապատրաստում են սպանություն: Ձեռնարկված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում, համագործակցելով Քրեական ոստիկանության հատուկ նշանակության վարչության ծառայողների հետ, Դվին գյուղի դաշտամիջյան հատվածում նույն գյուղի բնակիչ 54-ամյա տղամարդուն պատկանող շինությունում հայտնաբերվել եւ զենք-զինամթերք ձեռք բերելու եւ պահելու հիմնավոր կասկածանքով ձերբակալվել եւ Քրեական ոստիկանության Արարատի մարզային վարչություն են տեղափոխվել 54-ամյա տղամարդը, Արտաշատի բնակիչ 41-ամյա, Դվին գյուղի բնակիչ 34-ամյա եւ Արմավիրի մարզի Մուսալեռ գյուղի բնակիչ 37-ամյա տղամարդիկ: Տոյոտայի զննությամբ մեքենայի սրահի ակնհայտ տեսանելի հատվածում հայտնաբերվել է ինքնաձիգը: Տղամարդիկ ներկայացվել են Արարատի մարզային քննչական վարչություն: 41-ամյա տղամարդը ձերբակալվել է:

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

Անցած տարվա դեկտեմբերի 26-ին Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն ստացվել էր ահազանգ, որ ցերեկը հարմարեցված գործիքով բացել են Բաբաջանյան փողոցի մի բնակարանի դուռ եւ գողացել գումար ու ոսկեղեն: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժնի ծառայողները ստացան տեղեկություն, որ բնակարանային գողությունը կատարել է մայրաքաղաքի Վիլնյուսի փողոցի բնակիչ 47-ամյա մի տղամարդ: Ձեռնարկվեցին միջոցառումներ, նախաքննական մարմնի հետ իրականացվեցին վարույթային գործողություններ, որոնց արդյունքում փետրվարի 9-ին 47-ամյա տղամարդու նկատմամբ հարուցվեց հանրային քրեական հետապնդում: Հաջորդ օրը նա ձերբակալվեց ու ներկայացվեց նախաքննական մարմին: Խափանման միջոց է կիրառվել կալանքը:

ԱՌԱՆՑ ԱԿՑԻԶԻ

Համայնքային ոստիկանության Արթիկի բաժնի ծառայողները փետրվարի 25-ին օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Անուշավան գյուղի 1-ին փողոցում գործող գազալցակայանի աշխատակիցը նշված տարածքում առանց ակցիզային դրոշմանիշի ծխախոտի վաճառքով է զբաղվում: Բացատրական աշխատանքի արդյունքում Արթիկի բնակիչ 41-ամյա տղամարդը հայտնել է, որ տեղեկությունը հավաստի է: Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կատարված զննությամբ նրա «Մերսեդես» մակնիշի մեքենայի բեռնախցիկում հայտնաբերվել է 616 տուփ տարբեր տեսակի ծխախոտ:

● *Հանրապետությունում անցած շաբաթ բացահայտվել է մարմնական վնասվածք պատճառելու 13 եւ խարդախության 12 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՆՎԻՐՈՒՄ Է

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեվան գյուղի բնակչուհի Սեդա Գարդիշյանը համագյուղացի բոլոր զինակոչիկներին ծառայության մեկնելուց առաջ նվիրում է իր գործած ձմեռային տաք, գեղեցիկ գուլպաները, որոնց մեջ կոնֆետներ է լցնում: Ոսկեվանի միջնակարգ դպրոցում հավաքարար աշխատող կինը զինծառայության մեկնողներին բարի ծառայություն եւ բարի վերադարձ է մաղթում:

8–ՐԴ ԴԱՍԱԺԱՄ

Տավուշցի ծնողները լրագրողիս դժգոհել են, որ իրենց երեխաները հանրակրթական դպրոցների 7-րդ եւ 9-րդ դասարաններում «Առողջ ապրելակերպ» առարկայի դասերը թվով 8-րդ դասաժամում են անում: 8-րդ դասաժամին երեխաները շատ հոգնած են լինում, այդպիսի վիճակում ինչ «Առողջ ապրելակերպի» դաս: Դա ոչ թե առողջ, այլ երեխաներին հիվանդացնող ապրելակերպ է: Փետրվարի 11-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների ծնողները լրագրողիս դժգոհել են, որ իրենց երեխաները 7-րդ եւ 9-րդ դասարաններում «Առողջ ապրելակերպ» առարկայի դասերը անում են 8-րդ դասաժամին, երբ աշակերտները հոգնած են լինում: Դպրոցներում ինչո՞ւ է 8-րդ դասաժամ անցկացվում»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Դպրոցում դասացուցակը կազմելիս դասաժամերը բաշխվում են ըստ առարկաների դժվարության, հետեւաբար խմբակները դրվում են կամ վերջին ժամ, կամ դասերի ավարտից հետո»:

ԴԱՏՎՈՒՄ ԵՆ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում 2020թ. մարտի 6-ից ընթանում է «Դիլիջան» ազգային պարկի տարբեր պահաբաժինների տարբեր տեղամասերի 15 անտառապահների դատավարությունը: Սուրեն եւ Արմեն Զարգարյաններին, Արթուր եւ Արմեն Մարտիրոսյաններին, Գագիկ եւ Սերգեյ Մելյաններին, Գագիկ Պողոսյանին, Մեհրաբ Պետրոսյանին, Շահեն Քոչարյանին, Ռուշան Կոխլիկյանին, Արայիկ Սողոմոնյանին, Արայիկ Սարուխանյանին, Արարատ Թամրազյանին, Սարգիս Բեգլարյանին, Վահե Գուլանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանցից յուրաքանչյուրը տարբեր ժամանակ՝ 2014թ. օգոստոսի 26-ից մինչեւ 2017թ. հոկտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում, հանդիսանալով «Դիլիջան» ազգային պարկի անտառապահ, ծառայության նկատմամբ ցուցաբերած անբարեխիղճ վերաբերմունքի հետեւանքով չի կատարել իր պաշտոնեական պարտականությունները, ինչի արդյունքում անզգուշությամբ առաջացել են ծանր հետեւանքներ, այն է՝ տեւական ժամանակ հիշյալ պահաբաժնի տարածքում ապօրինի կերպով հատվել են տարբեր տեսակի ծառեր: Անտառապահներին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր. 315 հոդվածի 2-րդ մասով («Պաշտոնեական անփութությունը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետեւանքներ»), խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը եւ գրավը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԶՈՀՎԱԾ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

ԱՄՆ–ԻՍՐԱՅԵԼ ՀԱՐՎԱԾՆԵՐԸ

Ինչպես արդեն հայտնի է, ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից շաբաթ օրը իրականացված հարվածների հետեւանքով զոհվել են Իրանի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ երկրի գերագույն առաջնորդը, պաշտպանության նախարարը եւ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) գլխավոր հրամանատարը:

Իրանի պետական Islamic Republic News Agency-ն (IRNA) ավելի վաղ հաստատել էր 86-ամյա գերագույն առաջնորդ Այաթոլլա Սեյեդ Ալի Խամենեիի մահը: Հաղորդվում է, որ հարվածների հետեւանքով զոհվել են նաեւ նրա ընտանիքի մի քանի անդամներ:

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը Խամենեիի սպանությունը բնութագրել է որպես «բաց պատերազմական հայտարարություն մուսուլմանների, մասնավորապես շիաների դեմ»:

Պետական լրատվամիջոցները հաստատել են նաեւ այլ բարձրաստիճան պաշտոնյաների զոհվելու մասին տեղեկությունները:

Ալի Շամխանին

Ալի Շամխանին Իրանի Պաշտպանության խորհրդի քարտուղարն էր եւ Խամենեիի մերձավոր խորհրդականը: Նա նախկինում ղեկավարել էր նաեւ Գերագույն ազգային անվտանգության խորհուրդը: Շամխանին ներգրավված էր ԱՄՆ-ի հետ միջուկային ծրագրի շուրջ բանակցություններում: 2025 թվականի հունիսին իսրայելական հարվածի ժամանակ նա ծանր վիրավորվել էր, սակայն այդ ժամանակ ողջ էր մնացել:

Աբդոլրահիմ Մուսավի

Մուսավին Իրանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետն էր: Նախկինում նա ղեկավարել էր Իրանի բանակը (2017-2025 թթ.): Արեւմտյան երկրները նրան մեղադրում էին բալիստիկ հրթիռների եւ անօդաչու համակարգերի զարգացման գործում ներգրավված լինելու համար: 2023 թվականին ԱՄՆ-ն եւ մի շարք արեւմտյան երկրներ նրա նկատմամբ պատժամիջոցներ էին կիրառել:

Ազիզ Նասիրզադեհ

Նասիրզադեհը զբաղեցնում էր պաշտպանության նախարարի պաշտոնը Փեզեշքիանի կառավարությունում: Նա նախկինում եղել էր ռազմաօդային ուժերի հրամանատար եւ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ: Վերջին ամիսներին նա հայտարարել էր, որ Իրանը կթիրախավորի տարածաշրջանում գտնվող ամերիկյան ռազմաբազաները, եթե ԱՄՆ-ը հարվածի առաջինը:

Մոհամմադ Փաքփուր

Փաքփուրը 2025 թվականի հունիսից մինչեւ մահը զբաղեցնում էր ԻՀՊԿ գլխավոր հրամանատարի պաշտոնը: Նա երկար տարիներ ղեկավարել էր ԻՀՊԿ ցամաքային ուժերը եւ համարվում էր կորպուսի ազդեցիկ ռազմական գործիչներից մեկը:

Ովքեր կարող են փոխարինել զոհված պաշտոնյաներին

Իրանի պետական հեռուստատեսության փոխանցմամբ՝ երկրի ղեկավարումը ժամանակավորապես կստանձնի երեք անդամից բաղկացած խորհուրդը՝ նախագահ Մասուդ Փեզեշքիանի, Գերագույն դատարանի ղեկավար Ղոլամ-Հոսեյն Մոհսենի Էջեիի եւ Պահապանների խորհրդի իրավաբաններից մեկի մասնակցությամբ:

Պահապանների խորհրդի անդամ Ալիռեզա Արաֆին նշանակվել է ղեկավարող խորհրդի կազմում, որը կկատարի գերագույն առաջնորդի լիազորությունները, մինչեւ Փորձագետների ժողովը նոր առաջնորդ ընտրի:

Վերլուծաբանների կարծիքով՝ կարեւոր դեր կարող են ստանձնել նաեւ անվտանգության ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ Ալի Լարիջանին: ԻՀՊԿ-ին մոտ կանգնած աղբյուրները որպես հավանական թեկնածու նշում են նաեւ կորպուսի փոխհրամանատար Ահմադ Վահիդիին:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՓԱԿՎԵԼ ԵՆ

Լիբանանի կրթության նախարարությունը հայտարարել է երկրում բոլոր պետական եւ մասնավոր դպրոցների, ինչպես նաեւ մասնագիտական ուսումնական հաստատությունների փակման մասին՝ կապված անվտանգային ռիսկերի ու երկրի տարբեր շրջաններում շարունակվող հարձակումների հետ: Այս մասին հայտնում է Լիբանանի ազգային լրատվական գործակալությունը:

Նախարարությունից հայտնել են, որ որոշումը կայացվել է ուսանողներին եւ ուսուցչական անձնակազմին պաշտպանելու համար:

Նախարարությունը տեղեկացրել է նաեւ, որ մի շարք պետական դպրոցներ կօգտագործվեն տեղահանված ընտանիքներին ապաստան տալու նպատակով:

ՆԱՎԹԻ ԳՆԵՐԸ ԱՃԵԼ ԵՆ

Ֆինանսական շուկաներում շաբաթվա մեկնարկը նշանավորվել է անկայունությամբ այն բանից հետո, երբ ԱՄՆ-ը եւ Իսրայելը հարվածներ հասցրեցին Իրանին:

Շաբաթ երեկոյան նավթի գները կտրուկ աճել են՝ պայմանավորված Մերձավոր Արեւելքից մատակարարումների հնարավոր խափանման մտավախություններով: Միաժամանակ ֆոնդային ինդեքսների ֆյուչերսները նվազել են, քանի որ ներդրողները նվազեցրել են ռիսկային ակտիվներում իրենց մասնակցությունը՝ տարածաշրջանային զարգացումներից բխող նոր աշխարհաքաղաքական եւ տնտեսական անորոշության պատճառով: Ոսկու գինը եւս աճել է՝ որպես ավանդական «անվտանգ» ակտիվ:

Վերլուծաբանների գնահատմամբ՝նման իրավիճակներում սովորաբար նվազում են պետական պարտատոմսերի եկամտաբերությունն ու բաժնետոմսերի գները՝ ռիսկային հավելավճարների վերագնահատման պատճառով:

Նավթի եւ բնական գազի գները հատկապես խոցելի են կտրուկ աճի համար, քանի որ Մերձավոր Արեւելքը էներգակիրների խոշոր արտադրող է, իսկ բեռնափոխադրումների եւ ապահովագրական ծախսերը բարձրանում են պատերազմի ռիսկի պայմաններում:

Brent տեսակի նավթի ֆյուչերսները աճել են ավելի քան 6 տոկոսով՝հասնելով շուրջ 77,50 դոլարի մեկ բարելի դիմաց՝ գրանցելով ամենաբարձր մակարդակը հունիսից ի վեր: WTI ամերիկյան հենանիշ նավթի գինը նույնպես աճել է մոտ 6 տոկոսով՝հասնելով շուրջ 71 դոլարի մեկ բարելի դիմաց: Ընդհանուր առմամբ, տարվա սկզբից նավթի գները բարձրացել են մոտ 20 տոկոսով:

Ֆոնդային շուկաներում Dow Jones, S&P 500 եւ Nasdaq 100 ինդեքսների ֆյուչերսները նվազել են մոտ 1 տոկոսով: Ոսկու ֆյուչերսները բարձրացել են գրեթե 2 տոկոսով՝հասնելով 5350 դոլարի մեկ ունցիայի դիմաց՝ ավելի քան մեկ ամսվա առավելագույնին: Բիթքոյնի գինը շաբաթ օրը կարճ ժամանակով նվազել է մինչեւ 63 հազար դոլար, սակայն կիրակի երեկոյան վերականգնվել է՝ հասնելով մոտ 67 հազար դոլարի:

Վերլուծաբանները նշում են, որ բարձր վառելիքային ծախսերը կարող են բացասաբար ազդել ավիաընկերությունների եւ զբոսաշրջային հատվածի վրա, ինչպես նաեւ բեռնափոխադրող եւ համաշխարհային առեւտրի հետ կապված ընկերությունների բաժնետոմսերի վրա: Միաժամանակ էներգետիկ ընկերությունները, ինչպես նաեւ պաշտպանական եւ անվտանգության ոլորտի կազմակերպությունները կարող են շահել ստեղծված իրավիճակից:

Փորձագետների կարծիքով՝աշխարհաքաղաքական ռիսկերը գնալով դառնում են ավելի հաճախակի, ինչի պայմաններում ակտիվ ռիսկերի կառավարումը դառնում է առաջնահերթ, քանի որ շուկաների առաջնորդությունը կարող է արագ փոխվել:

Ա. Վ.

● *Ըստ ոստիկանության տվյալների՝անցած շաբաթ հանրապետությունում բացահայտվել է թմրանյութի հայտնաբերման 21 դեպք:*

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԵԳԻՊՏՈՍԻՑ ՏԱՐՀԱՆԵԼ ԵՆ

Ռուսաստանի ԱԻՆ-ին պատկանող Իլ-76 ինքնաթիռը ՌԴ քաղաքացիներին Եգիպտոսից տեղափոխել է «Ժուկովսկի» օդանավակայան: Այս մասին մարտի 2-ին հայտնել են ՌԴ ԱԻՆ մամուլի ծառայությունից՝ փոխանցում է «Իզվեստիա»-ն:

Մասնավորեցվում է, որ հատուկ ավիացիոն չվերթը վայրէջք է կատարել «Ժուկովսկի» օդանավակայանում: Ինքնաթիռը տեղափոխել է Իսրայելի տարածքում գտնվող ռուսական հաստատությունների աշխատակիցներին եւ նրանց ընտանիքների անդամներին, ովքեր ավելի վաղ ցամաքային անցակետերով տեղափոխվել էին Շարմ էլ-Շեյխ:

Տարհանումն իրականացվել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հանձնարարականի եւ ՌԴ ԱԻՆ ղեկավար Ալեքսանդր Կուրենկովի կարգադրության շրջանակներում: Այս պահի դրությամբ երկրի տարածք է ժամանել 84 մարդ, որոնցից 38-ը՝ անչափահասներ:

ԱՄՆ-ն եւ Իսրայելը փետրվարի 28-ին լայնածավալ ռազմական գործողություն են սկսել Իրանում: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը դրա նպատակն անվանել է «ամերիկացի ժողովրդի պաշտպանությունը»: Իսրայելը եւ ԱՄՆ-ն բազմաթիվ հարվածներ են հասցրել Իրանի ռազմական եւ քաղաքացիական օբյեկտներին, այդ թվում՝ Մինաբ քաղաքի դպրոցին:

Ի պատասխան՝ Իրանն սկսել է «Ճշմարիտ խոստում 4» գործողությունը եւ հարվածել Մերձավոր Արեւելքի երկրներում գտնվող ամերիկյան ռազմակայաններին, ինչպես նաեւ Իսրայելի քաղաքներին: Իրանական գնդակոծությունների հետեւանքով տուժել են ԱՄԷ-ն, Բահրեյնը, Իրաքը, Օմանը եւ Պարսից ծոցի այլ երկրներ:

ՓԱԿՈՒՄ Է ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՆԵՐԸ

Տարածաշրջանային պատերազմի սրման պատճառով Արաբական Միացյալ Էմիրությունները առեւտրային շաբաթվա սկզբին փակում են երկրի հիմնական ֆոնդային բորսաները, հայտնում է Associated Press-ը:

Երկրի կապիտալի շուկայի վարչությունը հայտնել է, որ Աբու Դաբիի ֆոնդային բորսան եւ Դուբայի ֆինանսական շուկան փակ կլինեն երկուշաբթի եւ երեքշաբթի օրերին:

Հայտարարության մեջ ասվում է, որ գերատեսչությունն ուշադիր հետեւելու է տարածաշրջանում տիրող իրավիճակին եւ անհրաժեշտության դեպքում հետագա քայլեր կձեռնարկի:

Nasdaq Dubai-ը նույնպես հայտարարել է առեւտրի դադարեցման մասին:

Թեեւ Դուբայը համարվում է Պարսից ծոցի հիմնական գործարար կենտրոնը, ԱՄԷ մայրաքաղաք Աբու Դաբին նույնպես տարածաշրջանային կարեւորագույն ֆինանսական հանգույց է, որտեղ կենտրոնացված են աշխարհի խոշորագույն ինքնիշխան հարստության հիմնադրամներից մի քանիսը:

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԶԱՆԵՐ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԴԱՍԵՐ Է ՔԱՂԵԼ

Մեծ Բրիտանիան համաձայնություն է տվել ԱՄՆ-ի խնդրանքին՝ օգտագործել բրիտանական ռազմական բազաները Իրանի հրթիռային կայաններին «դաշտպանական» հարվածներ հասցնելու համար, հայտարարել է վարչապետ Քիր Ստարմերը:

Վարչապետը հավելել է, որ Մեծ Բրիտանիան դասեր է քաղել «Իրաքի սխալներից» եւ չի մասնակցել Իրանի վրա առաջին հարվածներին, ինչպես նաեւ «հիմա չի ներգրավվի հարձակողական գործողություններում»:

BBC-ի տվյալներով, ԱՄՆ-ն, ամենայն հավանականությամբ, կիրականացնի գործողություններն՝ օգտագործելով RAF Fairford Գլոստերֆշիրում եւ Diego Garcia ռազմավարական բազան Հնդկական օվկիանոսում:

Նշենք, որ վարչապետի հայտարարությունից մի քանի ժամ առաջ՝ կիրակի երեկոյան, Կիպրոսում գտնվող բրիտանական RAF ռազմակայանը ենթարկվել է դրոնային հարվածի, տուժածներ չկան: Կարգապահական մարմինները հետաքննում են հարձակման աղբյուրը:

Վարչապետը հայտարարել է, որ որոշումը՝ համաձայնություն տալ ԱՄՆ-ին, հիմնված է «մտերիմ դաշնակիցների ինքնապաշտպանության» եւ բրիտանական քաղաքացիների պաշտպանության սկզբունքի վրա՝ քննադատելով Իրանի «կոշտ ռազմավարությունը»: Նա ընդգծել է, որ ԱՄՆ-ն կօգտագործի բրիտանական բազաները «մասնավորապես եւ սահմանափակ պաշտպանական նպատակով»՝ ոչնչացնելու Իրանի հրթիռները:

Վարչապետը նաեւ ասել է, որ գործողությունը համապատասխանում է միջազգային իրավունքին, Մեծ Բրիտանիայի կառավարությունը նաեւ հրապարակել է իրավաբանական եզրակացությունների ամփոփագիր:

Մեծ Բրիտանիայի վարչապետը ընդգծել է, որ բրիտանական ինքնաթիռները Մերձավոր Արեւելքում են, սակայն չեն մասնակցել հարվածներին: Նա նշել է, որ առնվազն 200,000 բրիտանացի կա տարածաշրջանում՝ ներառյալ զբոսաշրջիկներ, բնակիչներ եւ ուղեւորներ, եւ որ կառավարությունը «կշարունակի ամեն հնարավոր բան անել նրանց աջակցելու համար»:

Իրավական եւ ռազմական փաստեր

Մեծ Բրիտանիայի պաշտպանական քարտուղար Ջոն Հիլին հայտարարել է, որ ԱՄՆ-ն ինքն է պատասխանատու իր գործողությունների իրավական հիմքերի համար, իսկ Մեծ Բրիտանիան «կիսում է իր դաշնակիցների հիմնական նպատակը, որ Իրանը երբեք միջուկային զենք չունենա»:

Միեւնույն ժամանակ, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ Գերմանիան միասին մեղադրել են Իրանին «անհամաչափ եւ անխնա հարվածներ հասցնելու» մեջ:

BBC-ի տեղեկություններով, Մեծ Բրիտանիայի կառավարությունը նաեւ պատրաստում է պլաններ՝ Մերձավոր Արեւելքում գտնվող բրիտանացիներին հնարավոր էվակուացնելու համար, եթե տարածաշրջանի օդային տարածքը շարունակի փակ մնալ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ՊԱՏՐԱՍՏ Է ՕԳՆԵԼ

Նախագահ Վլադիմիր Զելենսկին հայտարարել է, որ Մերձավոր Արեւելքում տիրող իրավիճակը ցույց տվեց հրթիռներից եւ շահեդներից լիարժեք պաշտպանվելու բարդությունը նույնիսկ այն երկրներում, որոնք ունեն ավելի որակյալ ՀՕՊ, քան Ուկրաինան. միեւնույն ժամանակ Ուկրաինան պատրաստ է օգնել գործընկեր երկրներին թշնամու հարձակումներին հակազդելու իր փորձով, ասել է նա իր ուղերձում:

«Մերձավոր Արեւելքում տիրող իրավիճակից կարելի է տեսնել, թե որքան դժվար է հրթիռներից եւ շահեդներից 100% պաշտպանություն ապահովելը նույնիսկ Ծոցի երկրներում, որոնք ունեն ՀՕՊ ավելի որակյալ համակարգեր, քան առայժմ մեզ տրամադրել են գործընկերները, ունեն համակարգերի ավելի մեծ քանակություն, բայց միեւնույն է՝ չեն խոցում ողջ բալիստիկան: Կան նաեւ շահեդներ, որոնք չեն կասեցվել տարածաշրջանի ՀՕՊ-ի կողմից:

Բոլորը տեսնում են, որ պաշտպանության մեր փորձը շատ առումներով անփոխարինելի է: Մենք պատրաստ ենք տարածել այդ փորձը, պատրաստ ենք օգնել այն ժողովուրդներին, ովքեր օգնել են Ուկրաինային այս ձմռանը եւ ընդհանրապես այս պատերազմի ընթացքում»,- ասել է նա:

Զելենսկին ընդգծել է, որ Եվրոպան պետք է, այնուամենայնիվ, իրեն ապահովի իրական ուժով, իր երկինքը, իր հողը, իր ծովը ցանկացած տիպի հարձակումներից պաշտպանելու իրական կարողությամբ. մասնավորապես դրա համար անհրաժեշտ է կառուցել ՀՕՊ արտադրության բավարար ծավալներ թե՛ դրոնների, թե՛ բալիստիկայի դեմ:

Նախագահը հավելել է, որ Ուկրաինան մանրամասնորեն արձանագրում է Իրանի շուրջ իրավիճակի յուրաքանչյուր փոփոխություն եւ գտնվում է գործընկերների հետ համակարգման մեջ:

ՀԱԿԱՉԻՆԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

Չինաստանը Մեծ Բրիտանիային կոչ է արել վերացնել չինական ընկերությունների դեմ պատժամիջոցները, հակառակ դեպքում կձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ՝ իրենց օրինական իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար: Ինչպես տեղեկանում ենք ՏԱՍՍ գործակալությունից, այդ մասին հայտարարել է Չինաստանի Առեւտրի նախարարության պաշտոնական ներկայացուցիչը՝ մեկնաբանելով Լոնդոնի կողմից չինական ձեռնարկությունների նկատմամբ սահմանափակումների կիրառումը՝ Ռուսաստանի հետ կապերի պատճառով:

«Չինաստանը Մեծ Բրիտանիային կոչ է անում անհապաղ վերացնել պատժամիջոցները ՉԺՀ-ի համապատասխան կազմակերպությունների նկատմամբ ՝ հաշվի առնելով չին-բրիտանական հարաբերությունների զարգացման դրական դինամիկան», - նշել է նախարարության ներկայացուցիչը:

Առեւտրի նախարարությունում նաեւ ընդգծել են, որ «Չինաստանը կձեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ վճռականորեն պաշտպանելու իր ընկերությունների օրինական իրավունքներն ու շահերը»: Պեկինից հավելել են, որ «Չինաստանի եւ Ռուսաստանի ընկերությունների միջեւ սովորական համագործակցությունը չպետք է առնչվի երրորդ կողմին»:

Մեծ Բրիտանիան հակառուսական պատժամիջոցների ցանկում է ներառել օտարերկրյա ընկերություններ, այդ թվում՝ 142 ընկերություն ԱՄԷ-ից, 39-ը՝ Չինաստանից, 3-ը՝ Թաիլանդից եւ 2-ը՝ Հնդկաստանից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԿՐԿԻՆ ՓՈՐՁԻՐ»

ՖԻԼՄՆ ԱՐԴԵՆ ՄԵԾ ԷԿՐԱՆԻՆ Է

Փետրվարի 26-ից էկրան է բարձրացել «Կրկին փորձիր» ֆանտաստիկ կինոկատակերգությունը՝ հանդիսատեսին առաջարկելով հումորային, ֆանտաստիկ եւ ուղերձով հագեցած պատմություն: Ֆիլմը պատմում է մի երիտասարդի մասին, որը հանուն սիրո վաճառում է իր հոգին՝ ստանալով վեց ցանկություն: Սակայն ստացած հնարավորությունների արդյունքում հայտնվում է ոչ միայն զվարճալի, այլեւ անսպասելի իրավիճակներում՝ ստիպելով վերանայել սեփական ընտրությունները ու առաջնահերթությունները:

Գլխավոր դերակատարներից Գարիկ Պապոյանը, որը նաեւ ֆիլմի պրոդյուսերներից է, նշում է, որ նախագիծը երկար ու հագեցած ճանապարհ է անցել, մինչեւ էկրան հասնելը: «Անցյալ տարի այս ժամանակ քննարկում էինք՝ ինչ պիտի անենք: Բայց ես չեմ հիշում իմ կյանքում այն կոնկրետ պահը, երբ սկսվեցին ֆիլմի մասին մտքերը, որովհետեւ ամենասկզբից գործընթացում եղել եմ»,-ասում է նա:

Ֆիլմը հատուկ նշանակություն ունի դերասանուհի Սոնա Մաթեւոսյանի համար. սա դերասանուհու առաջին գեղարվեստական ֆիլմն է: «Շատ հուզված եմ, երեւի հենց նրա համար, որ իմ առաջին ֆիլմն էր: Բայց շատ ուրախ ու շնորհակալ եմ, որ այս փորձը հենց այս կազմի հետ էր»,-նշում է դերասանուհին:

Գարիկ Պապոյանի խոսքով՝ իրենց համար հպարտության առիթ էր, որ Սոնա Մաթեւոսյանի նման բազմաժանր դերասանուհին հենց այս նախագծով է իր առաջին քայլն արել մեծ կինոյում:

Ֆիլմում սատանայի դերը մարմնավորում է Լուիզա Ներսիսյանը: Ստեղծագործական խումբը սկզբից եւեթ հենց նրան էր պատկերացնում այդ կերպարում: Գարիկը խոստովանում է, որ Լուիզայի խաղը «ցնցել» է բոլորին իր բնականությամբ եւ արտահայտչականությամբ:

Իսկ Արմուշի հետ աշխատանքը Գարիկ Պապոյանը բնութագրում է որպես ամենաօրգանիկ գործընթացներից մեկը. «Արմուշի հետ խաղալն ինձ համար նույնն է, ինչ շնչելը»:

Ֆիլմում նկարահանվել է նաեւ Գարիկ Պապոյանի կինը՝ Մարիաննա Վարդանյանը, որը լսարանին առավել հայտնի է որպես բլոգեր: Ըստ նրա՝ ֆիլմում նկարահանվելու առաջարկը եղել է անսպասելի. այն ստացել է օդանավակայանում՝ վերադարձի թռիչքին պատրաստվելիս:

«Գարիկն ասաց՝ գիտե՞ս, որ գլխավոր դերերից մեկն էլ դու ես: Ես բառացիորեն թռվռում էի հերթի մեջ: Շատ հուզված էի ու ուրախ»,-պատմում է նա: Թեպետ նրա դերը ծավալով մեծ չէ, սակայն, ինչպես ինքն է նշում, այն ասելիքով է:

Ըստ Գարիկի՝ ինքը եւ Մարիաննան հստակ որոշում ունեին, որ աշխատանքային համագործակցություններ չպետք է ունենան, սակայն այս ֆիլմն իրենց մտադրությունը ստիպեց փոխել: Ֆիլմում նկարահանվել են նաեւ Գարիկի աղջիկները:

Ֆիլմի ռեժիսորներն են Արման Սարգսյանը եւ Գրիգոր Գասպարյանը: Հենց նրանց աշխատանքային միության արդյունքն են հայտնի տաքսիստ Հենդոյի մասին պատմող «Բարի օր» եւ «Բարի օր 2» ֆիլմերը: Ռեժիսոր Արման Սարգսյանի խոսքով՝ «Կրկին փորձիր» ֆիլմի առաջնային նպատակը հանդիսատեսին ծիծաղ պարգեւելն է, սակայն ստեղծագործական թիմը կարեւորել է նաեւ արժեքային ուղերձը. «Շատ հաճախ չենք նկատում այն, ինչ ունենք մեր կողքին: Վազում ենք ուրիշ բաների հետեւից, բայց ամենակարեւորը մնում է մեր շուրջը: Ուզել ենք դա փոխանցել կատակերգության միջոցով»:

«Կրկին փորձիր» ֆիլմը հանդիսատեսին տալիս է ոչ միայն ծիծաղելու, այլեւ սեփական ցանկություններն ու առաջնահերթությունները վերաիմաստավորելու հնարավորություն:

Ստեղծագործական կազմ

Գլխավոր դերերում՝ Գարիկ Պապոյան, Սոնա Մաթեւոսյան, Լուիզա Ներսիսյան, Արմուշ, Մարիաննա Վարդանյան:

Ռեժիսորներ՝ Արման Սարգսյան, Գրիգոր Գասպարյան

Գլխավոր պրոդյուսեր՝ Ամարաս Գասպարյան

Պրոդյուսերներ՝ Գարիկ Պապոյան, Արման Սարգսյան, Գրիգոր Գասպարյան

Սցենարի հեղինակներ՝ Վան Գրիգորյան, Արմեն Սարգսյան

ՄԱՐԶԱԿԱՆ

ՎՆԱՍՎԱԾՔ

«Ալ-Նասրի» գլխավոր մարզիչ Ժորժե Ժեզուշը խոսել է թիմի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուի վնասվածքի մասին, որը պորտուգալացին ստացել է Սաուդյան Արաբիայի Պրո-լիգայի 24-րդ տուրի՝ «Ալ-Ֆեյհայի» դեմ խաղում (3:1): «Նա մկանային ցավ զգաց: Երկրորդ գոլը խփելուց հետո չցանկացա ռիսկի դիմել եւ փոխարինեցի նրան: Բժշկական շտաբը, իհարկե, կգնահատի նրա վիճակը, բայց նա միայն մկանային հոգնածություն էր զգացել: Որպես մարզիչ՝ իմ աշխատանքն է հստակ հասկանալ խաղի մանրամասները եւ ճիշտ ժամանակին ճիշտ փոխարինումներ կատարել: Բայց դրա համար անհրաժեշտ են նաեւ ֆուտբոլիստներ, որոնք ունակ են վճռել խաղի ելքն ու իրենց ներդրումն ունենալ»,- Ժեզուշի խոսքերն է մեջբերում A Bola-ն:

Հիշեցնենք, որ հանդիպման 11-րդ րոպեին Կրիշտիանու Ռոնալդուն չէր իրացրել 11-մետրանոցը, իսկ 81-րդ րոպեին պորտուգալացին փոխարինվել էր աջ ոտքի հետ կապված խնդիրների պատճառով: Ընթացիկ մրցաշրջանում Ռոնալդուն ակումբի կազմում բոլոր մրցաշարերում անցկացրել է 26 հանդիպում՝ դառնալով 22 գոլի եւ 4 գոլային փոխանցման հեղինակ:

ԱՄԵՆԱԲԱՐԴ ՄՐՑԱԿԻՑԸ

UFC-ի թեթեւ քաշային կարգի գործող չեմպիոն Իլիա Թոփուրիան անկեղծացել է՝նշելով խառը մենամարտերում (MMA) իր ամենադժվար մրցակցին: Ինչպես փոխանցում է Sportskeeda պորտալը, «Մատադորը» առանձնացրել է ավստրալացի նախկին չեմպիոն Ալեքսանդր Վոլկանովսկիին: «Դա Վոլկանովսկին է: Նա չափազանց խելացի մարտիկ է եւ հստակ գիտի՝ ինչպես մենամարտել: Ալեքսը շատ հաշվենկատ է»,- նշել է Թոփուրիան:

Հիշեցնենք, որ 29-ամյա մարտիկը պրոֆեսիոնալ օկտագոնում իր նորամուտը նշել է 2015 թվականի ապրիլին, իսկ աշխարհի ամենահեղինակավոր՝ UFC կազմակերպությունում հանդես է գալիս 2020 թվականի հոկտեմբերից: Թոփուրիայի անթերի վիճակագրությունը ներկայումս ներառում է 17 հաղթանակ, որոնցից միայն երկուսն են գրանցվել մրցավարների որոշմամբ (մնացածն ավարտվել են ժամկետից շուտ):

ՊԱՏՄԵԼ Է

Մադրիդի «Ատլետիկոյի» նախկին հարձակվող Դիեգո Կոստան, վերհիշելով իսպանական Լա լիգայում անցկացրած տարիները, ուշագրավ դրվագներ է պատմել «Բարսելոնայի» պաշտպաններ Ժերար Պիկեի եւ Կառլես Պույոլի հետ դիմակայություններից: 2010-ականների առաջին կեսին Դիեգո Սիմեոնեի գլխավորած թիմում փայլուն մրցելույթներով աչքի ընկած, իսկ ավելի ուշ Լոնդոնի «Չելսի» տեղափոխված ֆուտբոլիստի խոսքերը մեջբերում է Barca Universal-ը: «Երբ խաղում էինք «Բարսելոնայի» դեմ, Պիկեն ու Պույոլը հաճախ էին ինձ հարվածում, սակայն դրանից հետո անմիջապես ներողություն էին խնդրում: Ես նրանցից պահանջում էի ոչ թե ներողություն խնդրել, այլ վիրավորել ինձ: «Բարսայի» դեմ խաղերում մենք հիմնականում ստիպված էինք պաշտպանվել. մենք գրեթե չէինք դիպչում գնդակին»,-անկեղծացել է Կոստան:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱՔՈՂԵՋԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Երեւանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի եւ «Արտպրոգրես» մշակութային ՀԿ նախաձեռնությամբ մարտի 21-22-ը կանցկացվի դասական երգեցողության համաքոլեջային մրցույթ-փառատոն՝ նվիրված ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, անվանի օպերային երգիչ (տենոր) եւ բեմադրիչ Գեղամ Գրիգորյանի ծննդյան 75-ամյակին:

ԿԳՄՍ նախարարությունից հայտնում են, որ փառատոնին կարող են մասնակցել Հայաստանում գործունեություն իրականացնող արվեստի եւ երաժշտական քոլեջների «Դասական երգեցողություն» մասնագիտությամբ սովորող ուսանողները: Փառատոնն անցկացվում է երկու խմբով՝ համապատասխանաբար առաջին եւ երկրորդ, երրորդ եւ չորրորդ կուրսերի ուսանողների համար:

Հարցերի եւ հավելյալ տեղեկատվության համար զանգահարել Երեւանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ՝ (010) 285-320, (+374) 91 781-370 հեռախոսահամարներով:

NETFLIX–Ը ՀՐԱԺԱՐՎԵԼ Է

Netflix սթրիմինգային ընկերությունը հայտարարել է, որ չի բարձրացնի Warner Bros.-ի գնման համար ավելի վաղ ներկայացված առաջարկը եւ այն չի հասցնի մեկ բաժնետոմսի համար 31 դոլարի, ինչն ավելի վաղ առաջարկել է Paramount Skydance ընկերությունը: Այս մասին հաղորդում է BBC-ն՝ վկայակոչելով Netflix-ի ղեկավարների հայտարարությունը:

Նրանք նշել են, որ նման գնով Warner Bros.-ը գնելու գործարքն այլեւս գրավիչ չէ, հետեւաբար Netflix-ը հրաժարվում է մրցակցել Paramount Skydance-ի առաջարկի հետ:

Մեկ բաժնետոմսի դիմաց 31 դոլարի դեպքում Warner Bros.-ը գնահատվում է 108 միլիարդ դոլար: Paramount-ը նաեւ առաջարկել է վճարել 7 միլիարդ դոլար, եթե գործարքը չեղյալ հայտարարվի, ինչպես նաեւ համաձայնել է վճարել 2,8 միլիարդ դոլար գումարը, որը Warner Bros.-ը պարտավորվել է վճարել Netflix-ին, եթե միաձուլման ծրագիրը ձախողվի:

Warner Bros.-ը տիրապետում է հոլիվուդյան ֆիլմերի գրեթե 100 տարվա արխիվին, ինչպես նաեւ հեղինակավոր HBO Max հեռուստատեսային սթրիմինգային ծառայությանը: Warner Bros.-ն ավելի վաղ հայտարարել էր, որ իր բիզնեսի մնացած մասը, այդ թվում՝ ավանդական հեռուստաալիքները եւ CNN լրատվական ալիքը, կտրամադրի անկախ ընկերության:

Paramount-ն ունի իր սեփական սթրիմինգային ծառայությունը, չնայած այն Netflix-ից եւ HBO Max-ից պակաս ժողովրդականություն է վայելում, ինչպես նաեւ Nickelodeon-ի, CBS-ի եւ Comedy Central ապրանքանիշների սեփականատերն է:

Paramount Skydance կոնգլոմերատը պատկանում է Էլիսոնների ընտանիքին, որը մտերիմ է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հետ: Կոնգլոմերատը գլխավորում է Լարի Էլիսոնի որդի Դեյվիդը, որը 2025 թվականից ակտիվորեն պայքարում է Warner Bros.-ը ձեռք բերելու համար:

● *Մարտի 3-ին՝ ժամը 19:30-ին, Կ.Ստանիսլավսկու անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա CHECK IN LOVE ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞վ կարող է լինել պրոբացիայի կամավոր:

Արայիկ Կիրակոսյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կամավոր կարող է լինել տասնութ տարին լրացած այն անձը, որը՝

1) տիրապետում է հայերենին,

2) ուսանում է իրավագետի, սոցիոլոգի կամ հոգեբանի մասնագիտությամբ կամ ունի պրոբացիայի ծառայության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ համապատասխան որակավորում:

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կամավոր չի կարող լինել այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, կամ՝

2) դատապարտվել է հանցագործության համար, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, կամ՝

3) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որեւէ մեկով:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ ծանոթանալ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կանոնադրությանը:

Նարինե Սմբատյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ պետական վերահսկողական ծառայության կանոնադրությանը կարող եք ծանոթանալ կայքի «Օրենսդրություն» բաժնից՝ այցելելով «Կանոնադրություն» ենթաբաժինը:

ՀՀ ՊԿԾ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ պետական վերահսկողական ծառայության կանոնադրությունը կարող եք նաեւ ներբեռնել եւ տպել www.supervision.am կայքից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը համացանցից

Լիլիթ Մկրտչյան-Հայկ Մինասյան զույգը արծաթե մեդալ է նվաճել Երեւանում անցկացվող գնդակային հրաձգության Եվրոպայի առաջնությունում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 11 - 16 - 2 + 2
	Կոտայքի լեռներ	- 10 - 14 - 1 + 2
	Կոտայքի նախալեռներ	- 5 - 8 + 4 + 7
	Գեղարքունիք	- 11 - 16 - 2 + 2
	Լոռի	- 9 - 14 + 4 + 9
	Տավուշ	- 7 - 11 + 5 + 8
	Արագածոտնի լեռներ	- 11 -15 - 2 + 1
	Արագածոտնի նախալեռներ	- 4 - 9 + 4 + 8

	Արարատ	- 3 - 6 + 6 + 9
	Արմավիր	- 3 - 6 + 7 + 10
	Վայոց ձորի լեռներ	- 11 - 15 - 2 + 1
	Վայոց ձորի նախալեռներ	- 3 - 6 + 6 + 9
	Սյունիքի լեռներ	- 12 - 16 0 - 3
	Սյունիքի նախալեռներ	- 10 - 15 + 4 + 8
	Սյունիքի հովիտներ	- 2 - 6 + 8 + 13
	Երեւան	- 4 - 6 + 6 + 8

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **02.03.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*